Լրացավ ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտի հիմնադիր-տնօրեն, ակադեմիկոս

Մխիթար Մկրտչի Ջրբաշյանի

ծննդյան 100 ամյակը

Վանի Տեղական Մասնաժողով
առաջին շարք՝ Մ. Ջրբաշեան, Ի. Հիսեան, Ռ. Շատուրեան
երկրորդ շարք՝ Ա. Երեմեան, Ս Գափամաճեան, Մ. Ճիտչեան

1935թ., Թիֆլիս, դասարանական օղակի պարապմունք

1970թ., Նիցա, Միջազգային մաթեմատիկական կոնգրես

1988թ., ԱՄՆ, Ի.Գողբերգին նվիրված գիտաժողով

1967թ., Երևան,
առաջին շարք՝ Ֆ. Հարությունյան, Ս. Սինանյան, Ա. Թալալյան, Մ. Ջրբաշյան, Ն. Առաքելյան
երկրորդ շարք՝ Ն. Եզգիբարյան, Ռ. Օսիպով, Ի. Խաչատրյան, Վ. Զաքարյան, Ա. Կիտբալյան, Ա. Ավետիսյան

1938թ., Երևան

Մ. Ջրբաշյանը ծնվել է 1918 թ. սեպտեմբերի 11-ին Երեւանում: Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1936 թ. ընդունվում է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: Ուսանողական տարիներից արդեն ի հայտ է գալիս նրա մաթեմատիկական տաղանդը: Այդ տարիների կարեւոր իրադարձություններից էր 1940թ. Մ. Կելդիշի կարդացած դասախոսությունները, որոնք նվիրված էին անալիտիկ ֆունկցիաների տեսությանը: Կելդիշի դասախոսությունները էապես ազդեցին Մ. Ջրբաշյանի մաթեմատիկական հետաքրքրությունների ձեւավորման վրա:

Ավարտելով համալսարանը՝ Մ. Ջրբաշյանը ԵՊՀ-ում աշխատում է որպես ասիստենտ եւ միաժամանակ ուսանում ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Ա. Շահինյանի ղեկավարությամբ: 1945 թ. ԵՊՀ-ում պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Անալիտիկ ֆունկցիաների ներկայացման որոշ հարցեր» թեմայով: Սա մաթեմատիկայի գծով առաջին թեկնածուական ատենախոսության պաշտպանությունն էր ԵՊՀ-ում:



1952թ., Մ. Ջրբաշյան, Ա. Շահինյան, Ս. Մերգելյան

1975թ., Մ. Ջրբաշյան, Ն. Առաքելյան

Ընդհամենը 4 տարի անց Մոսկվայի պետական համալսարանում Մ. Ջրբաշյանը փայլուն պաշտպանում է նաեւ դոկտորական ատենախոսությունը «Մետրիկական թեորեմներ անալիտիկ ֆունկցիաների լրիվության եւ ներկայացման վերաբերյալ» թեմայով:

Նրա պաշտոնական ընդդիմախոսներ Մ.Կելդիշը, Ա.Գելֆոնդը եւ Ա.Մարկուշեվիչը գնահատեցին Մ.Ջրբաշյանի աշխատանքը որպես խոշորագույն ներդրում կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսությունում: Լինելով առաջատար մաթեմատիկոսներից մեկը Հայաստանում՝ Մ.Ջրբաշյանը 1953 թ. ընտրվում է ՀՍՍՀ ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1956 թ.-ին՝ իսկական անդամ:

1974թ., Երևան

1965թ., Սեվան, Մ. Ջրբաշյան, Ռ. Նեվանլինա

1950թ., Երևան
Մ. Ջրբաշյան, Ս. Մերգելյան, Ռ. Ալեքսանդրյան

1958թ., Մոսկվա
առաջին շարք՝ Ա. Թալալյան, Մ. Ջրբաշյան,Ա. Շահինյան, Հ. Բաղալյան, Հ. Քոչարյան
երկրորդ շարք՝ Է. Քեհեյան, Ա. Ներսեսյան, Ն. Առաքելյան, Ի. Խաչատրյան, Ա. Ավետիսյան, Ժ. Ավետիսյան

1966թ., Մոսկվա
Միջազգային մաթեմատիկական կոնգրես առաջին շարք՝
Ա. Ավետիսյան, Մ. Ջրբաշյան, Հ. Քոչարյան
երկրորդ շարք՝ Ա. Կիտբալյան, Ն. Առաքելյան, Ս. Հակոբյան, Վ. Զաքարյան

Մեծ է ակադեմիկոս Ջրբաշյանի ավանդը Հայաստանում մաթեմատիկական դպրոցի կայացման եւ զարգացման գործում: Նրա գիտական աշխատությունները կոմպլեքս անալիզի բնագավառում արժանացան համաշխարհային ճանաչման եւ ստացան լայն արձագանք: Մ.Ջրբաշյանը 1957-1960 թթ. եղել է ԵՊՀ-ի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի դեկան, 1978-1991թթ. ղեկավարել է ԵՊՀ-ի ֆունկցիաների տեսության ամբիոնը: Նա մեծ եռանդով զբաղվել է բարձրորակ մասնագետների պատրաստման գործով: Մ. Ջրբաշյանի բազմաթիվ աշակերտներ ժամանակի ընթացքում դարձան հայտնի գիտնականներ՝ ակադեմիկոսներ, գիտության դոկտորներ եւ թեկնածուներ: Մ. Ջրբաշյանի գիտա-կազմակերպչական ակնառու ունակությունները ցայտուն կերպով դրսեւորվեցին ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը գլխավորելու տարիներին (1971-1989), որոնք դարձան ինստիտուտի վերելքի տարիներ:

Մխիթար Մկրտչի Ջրբաշյանը վախճանվեց 1994թ. մայիսի 6-ին: